ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*

Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ.*, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ.*, *պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան

ՇԻԿԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխաթյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլետ Պետրոսյան

ՏՈՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանույշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷՋԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Մհեր Քումռնց

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՑՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան
ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ
(ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ) 108

ԱՂԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան
ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՆՄՈՒՇՆԵՐ
(19-ՐԴ–20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 118

Կարինե Բազեյան
ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋ 129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սաֆարյան
ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 138

Նարինե Շամամյան
ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ
(ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ) 145

Արմինե Շահբազյան
ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ 155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մեդա Գալստյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 168

Համլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ 183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ 189

Նժդեհ Երանյան
Պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի պատմության թանգարան,
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
nzhdehyan@gmail.com

Համլետ Պետրոսյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Երևանի պետական համալսարան,
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
hpetrosy@gmail.com

ՏՈՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Հիմնաբառեր. Տող, Սբ. Հովհաննես, Մելիք Եգան, մատուռ, տնտեսական շինություն, թաղում, դրամ:

Ներածություն

Տողի Սբ. Հովհաննես եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում, Մելիք Եգանի ապարանքից մոտ 50 մ հարավ-արևմուտք՝ թեքադիր տեղանքի վրա: Եկեղեցին բավական լավ պահպանված վիճակում է: Այն կրկնում է ուշ միջնադարում Սյունիքում և Հայաստանի որոշ մասերում լայնորեն տարածված եռանավ բազիլիկի տիպը (նկ. 1): Եկեղեցու կառուցման ժամանակը ստույգ վկայված չէ: Խաչակալի վրա ունեցել է ՌՃԶԵ (1736) թվագրված արձանագրություն, որի համաձայն, կտուրը այդ ժամանակ նորոգվել է Աղվանքի Պետրոս կաթողիկոսի հրամանով, Մելիք Եգանի կողմից (ԴՀՎ 1982, 178):

Եկեղեցուն հարավային կողմից կից է 17,0×22,0 մ չափերով պարսպապատ մի բակ: Ըստ Մակար Բարխուդարյանցի տեղեկությունների՝ բակում՝ եկեղեցուն կից, եղել է մատուռ, որը ծառայել է որպես Դիզակի Եգանյան մելիքների գերեզմանատուն (Բարխուտարեանց 1895, 75–76):

Այդ տեղեկությունները ճշտելու, ինչպես նաև եկեղեցու շրջակայքն ուսումնասիրելու նպատակով 2017 թ. եկեղեցու հյուսիսային և հարավային բակերում իրականացվեցին պեղումներ:

---

* Ստացվել է 17.08.2022 թ., ուղարկվել է գրախոսման 17.08.2022 թ., ընդունվել է տպագրության 18.11.2022 թ.: Պեղումներն իրականացվել են Արցախի Հանրապետության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի արշավախմբի կողմից: Արշավախմբի ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու Նժդեհ Երանյան, ճարտարապետ՝ Մանուշակ Տիտանյան: Աշխատանքներին մասնակցել են բանվորներ Տող գյուղից: Պեղման աշխատանքները ֆինանսավորվել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից:

Սույն հաղորդմամբ ներկայացվում է եկեղեցու 2017 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները:

Հարավային տապանաբակի հետազոտությունը

Եկեղեցու հարավային բակում պեղումներն ընթացել են պարսպապատից ներս ամբողջ հատվածում՝ ներառելով.

հարավային բակի հյուսիս-արևմտյան հատվածի քառանկյուն շինությունը,

հարավային բակի հյուսիս-արևելյան հատվածի ուղղանկյուն շինությունը,

հարավային տապանաբակը:

Բակի հյուսիս-արևմտյան հատվածի քառանկյուն շինության պեղումները: Մինչև պեղումները եկեղեցու հարավային բակում՝ բակի հյուսիս-արևմտյան հատվածում, եկեղեցուն կից, երևում էին քառակուսի հատակագծով շինության հետքերը (արտաքին չափերը 8,2×5,3 մ, նկ. 2): Որոշ հետազոտողներ հավանական էին համարում, որ պատմաբան Մ. Բարխուդարյանցի մոտ հիշատակվող մելիքական տապանատունը կարող է լինել այս շինությունը (ԴՀՎ 1982, 174): Քանի որ Սբ. Հովհաննես եկեղեցու շրջակայքի պեղումների հիմնական նպատակներից մեկն էր հայտնաբերել մելիքական տապանատունը և հետազոտել այն, պեղումները սկսվեցին հենց այս հատվածից: Պահպանվել է շինության արևմտյան պատը մինչև 3 մ, որի մեջ առկա է մեկ խորշ, և մյուս պատերը՝ մինչև 0,7մ բարձրության: Մուտքն ամենայն հավանականությամբ եղել է հարավային կողմից:

Պեղումների արդյունքում 20–30 սմ խորությամբ հողի շերտը հեռացնելուց հետո շինության ամբողջ մակերեսով բացվեց ժայռը: Շինությունը կառուցվել է թեքադիր ժայռի վրա և չէր կարող լինել ենթադրյալ տապանատունը (նկ. 3):

Շինության կենտրոնում՝ ժայռի վրա, բացվել է 40 սմ տրամագծով և 23 սմ խորությամբ կավածեփ հոր, որի հատակին վավերացվեցին մոխրի, ինչպես նաև ոսկորների և մի քանի խեցանոթների բեկորներ: Այս շինությունը հյուսիսային պատով կից է եկեղեցուն և դատելով շարվածքից՝ այն կառուցվել է եկեղեցուց հետո և հավանաբար վանքին կից տնտեսական նշանակության կառույց է եղել:

Հետաքրքրական է շինության արևելյան պատի տակ՝ հյուսիս-արևելյան անկյունում, հատակի վրայից հայտնաբերված փոքր սափորը, որի մեջ գտնվել է 170 արծաթե մետաղադրամներից բաղկացած գանձը (նկ. 4):

Գանձի ուսումնասիրությունը կարևոր է ինչպես Տող գյուղի պատմության ուսումնասիրության, այնպես և այս կառույցի թվագրման որոշ հարցեր հստակեցնելու համար:

Արծաթե մետաղադրամների ուսումնասիրությունը: Արծաթե մետաղադրամներն ուսումնասիրել է Հայաստանի պատմության թանգարանի իսլամական դրամների մասնագետ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբագիտության բաժնի առաջատար գիտաշխատող, պ. գ. թ. Արամ Վարդանյանը:

Ըստ հետազոտողի՝ գանձը բաղկացած է 170 արծաթե (աբասի) դրամներից (նկ. 5), որոնցից՝

127-ը՝ Գյանջայի խանության, ժամ. Մուհամմադ Հասան Խան (1760–1780 թթ.),

40-ը՝ Պարսկաստանի Զանդ հարստության, Քարիմ Խան (1753–1779 թթ.),

1-ը՝ Նախճավանի խանության, ժամ. Ռահիմ խան (1767–1770 թթ.),

1-ը՝ Շիրվանի խանության, ժամ. Ֆատհ Ալի խան (1766–1788 թթ.),

1-ը՝ Պարսկաստանի Սաֆյանների, Թահմասպ II (1722–1732 թթ.):

Ըստ դրամահատարանների գանձի դրամները ներկայացված են հետևյալ կերպ՝

127-ը՝ Գյանջա,

40-ը՝ Դար ալ-Սուլթանատ Թաբրիզ (Թավրիզ),

1-ը՝ Նախիջևան,

1-ը՝ Շամախա,

1-ը՝ Ռաշտ (Ռեշտ, Գիլյանի մարզ, Իրան):

Դրամների գերիշխող մասը (86%) հատված է եղել հիջրայի 1184, 1187 և 1188 թթ.: Ամենահին դրամը պատկանում է Թահմասպ II-ին և թվագրվում է 1139 թ. (1726/7 թթ.): Ամենաերիտասարդ դրամները պատկանում են Գյանջայի խանությանը և թվագրվում են 1188 թ. (1774/5 թթ.):

Հետևաբար գանձը թաղված է 1188 թ. (1774/5 թթ.) ոչ շուտ:

Հարավային բակի հյուսիս-արևելյան հատվածի ուղղանկյուն շինության պեղումները: Պեղումների արդյունքում մեկ այլ շինություն է բացվել հարավային բակի հյուսիս-արևելյան հատվածում: Այն ևս կից է եկեղեցու հարավային պատին, ունի ուղղանկյուն հատակագիծ (արտաքին չափսերը 9,0×4,0մ) (նկ. 6): Պեղումների արդյունքում վավերացվել է կառույցի մինչև 0,5 մ բարձրության պատերը: Կառույցի արևելյան հատվածը ներսից ունի կլոր աբսիդ (նկ. 7):

Աբսիդի արտաքին քարերը սրբատաշ են: Ըստ մելիքական ապարանքը ուսումնասիրող ճարտարապետ Մանվել Սարգսյանի՝ դրանք իրենց մշակումով համապատասխանում են մելիքական ժամանակների կառույցների քարերին, և բացառված չէ, որ շինությունը կառուցվել է մելիքների ժամանակ: Հետաքրքրական են կառույցի հարավային պատի մեջ որպես շինանյութ գործածված երկու տապանաքարի առկայությունը, ինչը օգնում է թվագրել կառույցը (նկ. 8): Երկու տապանաքարերից մեկը կրում է ՌՃՀԸ (1729), երկրորդը՝ ՌՃՀԹ (1730) թվակիր արձանագրություն: Հետևաբար 1729 թ. կարելի սահմանել շինության ստորին ժամանակագրական սահմանը (terminus post quem):

Հետաքրքրական են պատերի մեջ կլոր երկայնական խողովականման զանգվածները: Դրանցից մեկի մեջ հայտնաբերվեց նաև գերանի մնացորդներ: Հավանաբար կառույցի պատերի մեջ գերաններ են տեղադրվել ծանրությունը թեթևացնելու և ամրություն հաղորդելու համար, որոնք ժամանակի ընթացքում քայքայվել են՝ տեղում թողնելով խողովականման խորշեր:

Այս կառույցը ևս դրված է ժայռի վրա, որտեղ վերին և ստորին մակարդակների միջև տարբերությունը 160 սմ է: Շինության մեջ տարբեր մակարդակներում պեղվել է ընդհանուր առմամբ 14 թաղում, որից չորսը բացվեց հողի մակերևույթից 0,4 մ խորության վրա: Դրանցից մեկը աբսիդի մեջ էր՝ «խորանի» տակ, երկուսը՝ անմիջապես արևելյան մուտքի դիմաց, իսկ մեկը՝ կենտրոնում՝ հյուսիսային պա-

տի տակ: Թաղումներն իրականացվել են շինության կառուցումից բավական ուշ և դրանք ուղղակիորեն չեն կապվում կառույցի հետ: Թաղումներից մեկն իրականացվել է անմիջապես կիսակլոր աբսիդի վրա, ընդ որում աբսիդի կրաշաղախի մի մասը հեռացվել է թաղման համար (նկ. 9): Հետաքրքիր էր թաղում N 2-ը, որի միջոցով հնարավոր եղավ թվագրել այս շերտի թաղումները: Այս թաղման հետ միասին բացվեց նաև հանգուցյալի հագուստի մի քանի բեկոր, փայտի, ինչպես նաև մեխերի բավական մեծ քանակություն: Հագուստի վրա պահպանվել էին կոճակներ, ուսադիրներ և որոշ նշաններ: Թաղման հետ բացված ցարական ժամանակներով թվագրվող «Брокар и К» օծանելիքի ապակե սրվակը թույլ տվեց թաղումը թվագրել 19-րդ դարի վերջ – 20-րդ դարի սկզբով (նկ. 10): Չորս կմախքները վավերացվելուց հետո հեռացվեցին: Պեղումները շարունակելով, նույն հատվածում իրար կողք բացվեց ևս 10 թաղում: Վերջիններս ենթարկվել են մանրամասն մարդաբանական ուսումնասիրության՝ մարդաբան Հասմիկ Սիմոնյանի կողմից:

Մարդաբանական հետազոտություն: Կարելի է վավերացնել. բոլոր թաղումներն իրականացված են դիադրման եղանակով, կմախքները գտնվում են մեջքի վրա, արմուտք-արևելք կողմնորոշմամբ: Թաղումները պատկանում են միջին տարիքի արական սեռի անհատների: Ամենաերիտասարդը 25 – 35, իսկ ամենատարեցը 40 – 45 տարեկան են: Ըստ մեզ հասած պատմական տվյալների՝ հայտնի է միայն Մելիք Եսայու ծննդյան և մահվան տարեթվերը՝ 1720 – 1781 թթ, այսինքն նա մահացել է 61 տարեկան հասակում (Магалян 2012, 202): Թաղումներից որևէ մեկը չի պատկանում այդ տարիքի տղամարդու:

Կմախքներից վերցրած նմուշները հստակ թվագրության նպատակով 2017 թվականին ենթարկվեցին C^{14} հետազոտության՝ Բելֆաստի թագավորական համալսարանի լաբորատորիայում:

Երկուսի նմուշներից լաբորատոր հետազոտության արդյունքում որևէ տվյալ հնարավոր չի եղել պարզել: Մյուս ութ նմուշների համաձայն, թաղումներն իրականացվել են 1727 – 1844 միջակայքում (աղյուսակ 1): Տեսնում ենք, որ որոշները համապատասխանում են Մելիք Եգանի հարազատների թաղումներին և չի բացառվում, որ սա այն տապանատունն է, որը հիշատակվում է տարբեր աղբյուրներում:

Սակայն բոլոր տվյալները փաստում են, որ դա կառուցվել է առնվազն 1729 թվականից հետո: Հետևաբար չի բացառվում, որ սա Մելիք Եգանի հոր՝ Ղուկաս Վարդապետի մահվանից շատ ավելի ուշ է կառուցվել, քանի որ հայտնի է, որ նա մահացել է 1715 թվականին (ԴՀՎ 1982, 178):

Եկեղեցու տապանաբակերի տապանաքարերի հետազոտությունը. պատկերաքանդակներն ու արձանագրությունները:

Հարավային բակի հետազոտությունը

Եկեղեցու հարավային բակի պեղումները երևան են բերել նաև եկեղեցուն հարավից կից տապանաբակը, որը ներառված է պարսպապատի մեջ (նկ. 11 – 12): Պեղումների արդյունքում հեռացվել է հարավային բակի մոտավորապես 70 սմ հաստությամբ հողի շերտը: Նախքան պեղումները բակում նկատելի էր 5 տապանաքար: Պեղումների արդյունքում հարավային տապանաբակում վավերացվել է

ավելի քան 50 տապանաքար: Տապանաքարերի գերակշիռ մասը կազմում են ուղղանկյուն-զուգահեռնահիստ ծավալ ունեցող և ուղղահայաց դիրքով տեղադրված տապանաքարերը, որոնք արձանագրություններ և պատկերաքանդակներ չեն կրում: Բացառություն են կազմում մատուռի շարվածքում վերօգտագործված երկու տապանաքարերը, որոնք ամենայն հավանակության բերվել են հյուսիսային տապանաբակից: Տասը տապանաքարեր իրենցից ներկայացնում են հարթ սալեր և կրում են արձանագրություններ (գտնվել են նաև առանձին տապանաքարերի բեկորներ): Արձանագրությունները ցույց են տալիս, որ տապանաքարերի մի մասը պատկանել է մելիքական ընտանիքի անդամներին, այն դեպքում, երբ հյուսիսային բակում մելիքական տոհմը նշող տապանքարեր չկան:

Հյուսիսային տապանաբակի հետազոտությունը

Եկեղեցու հյուսիսային բակի մաքրման աշխատանքներն իրականացվել են նախքան պեղումները՝ Արցախի Հանրապետության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից: Հյուսիսային բակում մաքրման աշխատանքների արդյունքում երևան են եկել մոտ երեք տասնյակ տապանաքար (նկ.13): Դրանց գերակշիռ մեծամասնությունը կազմում են ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարերը, որոնցից երեքն ունեն գլխաքարեր: Կան նաև երեք հարթ տապանաքարեր, որոնցից մեկն ունի կանոնավոր կամարակերպ գլխաքարեր: 24 տապանաքար արձանագիր է: Հյուսիսային տապանաբակի արձանագրությունները ներառում են 1734–1777 թվականների միջակայքը: Հարավային բակինը՝ մի փոքր ավելի ուշ են (1761–1816 թթ.): Կարելի է ենթադրել, որ եկեղեցու վերանորոգումից հետո նրա հարավային բակը վեր է ածվել մելիքական տոհմի գերեզմանոցի, իսկ հյուսիսային բակում դադարել են թաղումներ կատարել: Հավանական է նաև, որ հարավային բակի անարձանագիր տապանաքարերը հիմնականում վերաբերում են 18-րդ դարի վերջին և 19-րդ դարին:

Պատկերաքանդակը

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարերի մեջ առանձնանում են մի շարք օրինակներ, որոնք պատկերաքանդակներ են կրում: Դրանք հիմնականում համահունչ են Արցախի և ընդհանուր հայաստանյան ուշմիջնադարյան տապանաքարային պատկերաքանդակին (Պետրոսյան 2014, Պետրոսյան, Երանյան 2022, 49–51) և ներկայացնում են հանգուցյալի երկրային իդեալականացված կերպարն ու անմահության հասնելու «ակնկալիքները» (նկ.14–16): Հիմնական թեմաներն են կռիվը (զինյալ հեծյալներ, վիշապամարտ, որսի տեսարաններ) և խնջույքը (հանգուցյալը գինու սափորով և գավաթով, ուտելիքով ծանրաբեռնված սեղաններ, սպասք, երաժիշտներ, պարողներ և այլն): Թեմաների և կերպարների առումով դրանք իրենց զուգահեռներն ունեն բազմաթիվ հուշարձաններում՝ առավել մոտ նմանություններ ցուցաբերելով Ավետարանոցի, Շոշի, Բերդաշենի, Եղիշա կուսի վանքի, Բոիեղցի վանքի տապանաքարային հորինվածքների հետ: Տողի հորինվածքների մեջ ուշագրավ է դրախտային միջավայրի ներկայացումն ի դեմս հրեշտակների, զանազան ծառերի և ծաղիկների: Որոշ տեսարաններում էլ հան-

գուցյալը պատկերվում է դրախտում, որպես նրա հոգու համար մատուցած պատարագի արդյունք՝ ի դեմս բուրվառով խնկարկող քահանայի:

Արձանագրությունները[1]

Տող գյուղի արձանագրությունները մի անգամ չէ, որ արժանացել են հետազոտողների ուշադրությանը: Գյուղաքաղաքի բազմաթիվ հուշարձանների գրությունները հիմնականում հրատարակված են (մանրամասն տե՛ս ԴՀՎ 1982, 174–181): Սուրբ Հովհաննես եկեղեցու մաքրման և պեղման աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են տապանաքարային նոր արձանագրություններ, որոնք այստեղ ներկայացվում են առաջին անգամ (նկ. 17–22):

Հարավային բակ

Հարթ տապանաքար, արձանագրությունը պարանահյուս եզրագոտու ներսում, չորս կանոնավոր տողերով, առաջին և երկրորդ տողերի սկզբնամասերը վնասված.

«Այս է տապան մեծին մելիք Եկանի որ[դի …] Ար/ա[մի]՞ թոռն Ղահրա[մա]ն բէկին, որ է որդի մելիք Բախտամին:/ Թվին :ՌՄԺԹ: (1770 թ.) յունվարի :ԻԴ: (24) և ինքն էր :ԺԵ: (15) ամեաց, [որ]/ փոխեցաւ առ Ա[ստուա]ծ: Որ ընթեռնուք մեկ Հայր մեղա ա[սէք]՞»:

Հարթ տապանաքար, արձանագրությունը կիսագլան եզրագոտուց ներքև, երկու կանոնավոր տողերով, սկզբից վնասված.

«[Այ]ս է տապան մելիք Բախտա/[մի] որդի Ջհան[ին]: Թվ[ին] :ՌՄԼԷ: (1788 թ.) էր: Ամէն»:

Հարթ տապանաքար, արձանագրությունը կիսագլան եզրագոտուց ներքև, չորս կանոնավոր տողերով.

«Այս է տապան լուսահոգի և բարեպաշտին/ մեծին մելիք Եկանի որդի Յօսեփ բէկին, որոյ/ եղև վաղճանն սորին ի թվին :ՌՄԺ:ին (1761 թ.), յուն/վարի :ԺԱ: (11) էր: Որ ընթեռնուք Ա[ստուա]ծ ողորմի ասէք: Ամէն»:

Հարթ տապանաքար, արձանագրությունը պարանահյուս եզրագոտու ներսում, երեք կանոնավոր տողերով, սկզբնամասերը վնասված.

«[Ա]յս է տապան մեծ [մել]իք Արամի որ/[դի] Բաղրի դուստր Յուրզադին: Թվին :ՌՄ/ԼԴ:ին (1785 թ.)»:

Հարթ տապանաքար, արձանագրությունը կիսագլան եզրագոտուց ներքև, երկու կանոնավոր տողերով, սկզբնամասերը և վերջնամասերը վնասված.

«[Ա]յս է տապան Ստեփա[նի]/ [ո]րդի Դավիթին: Թվին :Ռ…:»:

Հարթ տապանաքար, արձանագրությունը կենտրոնական մասում հատուկ փորված ուղղանկյուն մակերեսին, չորս կանոնավոր տողերով.

«[Ա]յս է տապան լուսահոգի Թաջում Նանուն,/ որ է տուստր Պապայ բէկին և

---

1 Ցավոք, ժամանակին զբաղված լինելով Տիգրանակերտի հնագիտական հետազոտությամբ, միայն կարճատև այցելություն եմ ունեցել Տող, ինչը հնարավորություն չի ընձեռել տեղում արտագրել արձանագրությունները: Արձանագրությունների ընթերցումն իրականացրել ենք լուսանկարներով, ինչով էլ հիմնականում բացատրվում են որոշ բացթողումներն ու թեական ընթերցումները – Համլետ Պետրոսյան:

կողակից Պաղր/ բէկին, ի հարսն մելիք Արամին ի Դողո/ մեծա գիւղին: 1800 ամի»:

Հարթ տապանաքար, արձանագրությունը կիսագլան եզրագոտու ներսում, երկու կանոնավոր տողերով.

«Այս է տապան մեծին Պաղր բէկի/ ելին: Թվ[ին] :ՌՄԿԵ:ին (1816 թ.)»:

Հարթ տապանաքար, արձանագրությունը երեք կանոնավոր տողերով.

«Այս է [տա]պան Բալաին, որ է որդի Առըսդամ բէկին, մայր Արամին՞: Թվ[ին] :ՌՄԽԲ: (1793 թ.)»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքար, արձանագրությունը հարավային երեսին, հյուսածո եզրագոտու ներսում, երկու կանոնավոր տողերով.

«Այս է տապանս տ[է]ր Ղազարի և իր՞ որդի Սափուին: Թվին :ՌՃՀԹ: (1730 թ.)»:

Ողղանկյուն-զուգահեռանիստ տապանաքար, արձանագրությունը հարավային երեսին, կիսագլան եզրագոտու ներսում, երկու կանոնավոր տողերով.

«Այս է տապան Աղայճանի/ որդի Գրիքորին: Թվին :ՌՃՂԵ: (1746 թ.)»:

Հյուսիսային բակ

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հարավային երեսին, փորագիր ակոսով առանձնացված մակերեսին, խաչից աջ, 4 տող.

«Այս է տապան խազազեցի/ Թափդուղի որդի Եկանին,/ [և] իւր կողագից Թօխուն:/ Թվին :ՌՃՂԴ: (1745 թ.):/ Յիշատակ է/ Պեճանին»: Վերջին նախադասությունն ավելացվել է հետագայում՝ երևի նոր թաղում հավելելուց հետո:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հյուսիսային երեսին, փորագիր ակոսով առանձնացված մակերեսին, 3 տող.

«Այս է տապան ահարեցի Պետրոսի/ն [և] իւր կողակից Աննային: Թվ[ին]: ՌՄ: (1751 թ.)»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հյուսիսային երեսին, 5 տող, հանգավորած.

«:ՌՃՂԲ: թվին (1743 թ.):/
Այս է տապան Դատոին,
որ է որդ[ի] Ոհանին:/
Սայ վախջանեալ յօրն առաջին.
անուն/ կոչեալ սարգաւաքին:
Օվ [հ]անդիպող գերէզ/մանիս՝
միայբերան հայր մեղայիս»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հյուսիսային երեսին, 3 տող.

«Այս է տապան ցղնեցի տ[է]ր Օվանէսանց/ Մարութի որդի սարգաւաք Մարքարին:/ Թվ[ին] :ՌՃՂ: (1741 թ.)»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հյուսիսային երեսին, 3 տող.

«Թվ[ին] :ՌՃՁԷ: (1738 թ.):/ Այս է տ[ա]պ[ա]ն Ղո[ւ]կասի, որ կողակից Սավ/ արին: Յիշէք Ղար[ի]պըն, իւր որդ[ի] Քասբարն»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հարավային երեսին, 3 տող.

«Այս է [տա]պան ղարադաղցի տէր/ Մարդրոսի որդ[ի] Հաթամին: Թվի[ն] :ՌՄԿ: (1811 թ.)»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հարավային երեսին, 3 տող.

«Այս է տապան դու/ղէցի խօճայ Դադայմա/լին որդ[ի] ըՍտեփան: Թվին :ՌՄԻՋ: (1777 թ.)»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հարավային երեսին, 2 տող.

«Այս է տապանս ՄԷյրապի/ որդ[ի] Պապային: Թվին :ՌՃՁԳ: (1734 թ.)»:

Ուղղանկյուն-զուգահեռնահիստ տապանաքարի վերին երեսին, 2 տող.

«Այս է տապան Խո(՞)…/ որդի Բաբաջանին (՞՞): Թվին :ՌՃՂԵ(՞): (1746 թ.)»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հյուսիսային երեսին, 2 տող.

«Այս է տապան խօճայ Սարքիսի/ որդի Սէվուն: Թվին :ՌՃՂԳ: (1744 թ.)»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հյուսիսային երեսին, 3 տող.

«Այս է տապան Եսու որդի Մաիլին: Թ[վ]/ին :ՌՃՂԹ: (1750 թ.): Օվ որ գարդա՝ մեկ բեր/ան Ա[ստուա]ծ ողորմի ասի: Ամէն»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հարավային երեսին, 2 տող.

«Այս է տապան Ղասո[ւ]միրզանց(՞)/ Մաիլի որդի Դադուն: Թվ[ին] :ՌՃՂ: (1741 թ.)»:

Ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարի հարավային երեսին, 2 տող.

«Այս է տապան ագուլեցի Մելէքաթամի/ որդի Յարութինին: Թվին :ՌՃՂԴ: (1745 թ.)»:

Ուղղանկյուն հարթ տապանաքարի երեսին, լայնակի, 6 տող.

«Տապան/ այս է Թէ/մուրի որդի…. Թվ[ին] :ՌՃ..:»: (սկարը հստակ չէ):

Եզրակացություններ

Այսպիսով, ամփոփելով Սբ. Հովհաննես եկեղեցու հնագիտական հետազոտության նախնական արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ՝

Եկեղեցու հարավային բակում՝ պարսպապատերից ներս, պահպանվել է երկու կառույց՝ հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան հատվածներում, ինչպես նաև շուրջ 50 տապանաքար:

Այս երկուսից բակի հյուսիս-արևմտյան հատվածում գտնվող կառույցը չի կարող լինել աղբյուրներում հիշատակվող մելիքական տապանաբակը: Այն ամենայն հավանականությամբ եկեղեցուն կից տնտեսական նշանակության կառույց է եղել:

Բակի հյուսիս-արևելյան հատվածում գտնվող կիսակլոր աբսիդով կառույցը, որտեղ հայտնաբերվել է 14 տարբեր ժամանակներում իրականացված թաղումներ, հավանական է, որ աղբյուրներում հիշատակվող մատուռ-դամբարանն է:

Ամբողջ հարավային բակում եկեղեցու կառուցումից սկսած մինչև 19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում իրականացվել են թաղումներ: Դատելով տապանաքարերից մի քանիսի արձանագրություններից՝ այստեղ են գտնվում նաև մելիքական ընտանիքի որոշ անդամների գերեզմաններ ևս:

Ամփոփելով՝ կարելի է ուրվագծել հետևյալ կառուցողական-ժամանակագրական ընթացքը՝

ա. 17 – 18-րդ դդ. կառուցվել է Սբ. Հովհաննես եկեղեցին,

բ. եկեղեցուն հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից կից կառուցվել են երկու կառույցներ: Կարող ենք փաստել, որ արևելքից կից կառույցը կառուցվել է

1729 թ.-ից հետո, իսկ արևմուտքից կից շինությունը՝ 1774/5 թ-ից հետո: Որքան ժամանակ են դրանք կանգուն եղել և ինչ հանգամանքներում են փլվել՝ հայտնի չէ: Կարելի է փաստել միայն, որ 19-րդ դարի վերջ–20-րդ դարի սկզբում արդեն հարավ-արևելքից կից շինությունը ծածկված է եղել հողով, որտեղ իրականացվել են նաև երկրորդական թաղումներ:

Պեղումների և մաքրման աշխատանքների արդյունքում հայտնաբերված ավելի քան ութսուն տապանաքարերի մի մասը կրում են պատկերաքանդակներ և արձանագրություններ, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ 1895–Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895:

ԴՀՎ 1982–Դիվան հայ վիմագրության V, Երևան, 1982:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2014–Պետրոսյան Հ. Հայաստանի ուշմիջնադարյան (15–18-րդ դդ.) տապանաքարային պատկերաքանդակի պատճառաբանական, պատկերագրական և իմաստաբանական քննության փորձ, «Բանբեր մատենադարանի», թիվ 21, Երևան, 2014, էջ 301–308:

ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԵՐԱՆՅԱՆ 2022–Պետրոսյան Հ., Երանյան Ն. Արցախի կոթողային մշակույթը, Երևան, 2022:

МАГАЛЯН 2012–Магалян А., Арцахские Меликства и меликские дома в XVII–XIX вв., Ереван, 2012.

Nzhdeh Yeranyan
PhD in History
History Museum of Armenia,
Institute of Archaeology and Ethnography NAS RA
nzhdehyan@gmail.com

Hamlet Petrosyan
Doctor of Sciences in History
Yerevan State University,
Institute of Archaeology and Ethnography NAS RA
hpetrosy@gmail.com

THE MAIN RESULTS OF THE ARCHAEOLOGICAL SURVEY OF ST. HOVHANNES (ST. JOHN) CHURCH IN TOGH

Keywords: Togh, St. Hovhannes, Avetaranots, Shosh, Bedashen, Yeghisha virgin monastery, Brieghtsi monastery

St. Hovhannes (St. John) Church under study is located in the centre of Togh, Hadrut region, the Republic of Artsakh, about 50 meters southwest of the palace of Melik Yegan, on a sloping site. The church is quite well preserved. It repeats the three-nave basilica type common in Syunik and some regions of Armenia in the Late Middle Ages. The exact date of construction of the church is unknown. According to the inscription on the pedestal of the cross, the roof was restored by Melik Yegan in 1736 by the order of the Catholicos of Aghuank (Caucasian Albania) Petros.

Next to the church on the south side is a walled courtyard measuring 17.0 x 22.0 meters. Historical sources contain information that there was a chapel in the courtyard next to the

church, which served as a tomb for the Melik-Yeganyans of Dizak.

In 2017, excavations were carried out in the northern and southern courtyards of the church in order to verify this information, as well as to study the surroundings of the church.

This report presents the main results of the 2017 archaeological survey of the church.

As a result of excavations and cleaning of the area, the remains of two buildings, as well as more than 80 tombstones from the northern and southern graveyards, some of which with relief carvings and inscriptions, were recorded. The latter are introduced into scientific use for the first time.

Нжде Еранян
кандидат исторических наук
Музей истории Армении,
Институт археологии и этнографии НАН РА
nzhdehyan@gmail.com

Гамлет Петросян
Доктор исторических наук, професор
Ереванский государственный университет,
Институт археологии и этнографии НАН РА
hpetrosy@gmail.com

ОСНОВНЫЕ РЕЗУЛЬТАТЫ АРХЕОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ ЦЕРКВИ СВ. ОВАННЕСА В ТОХЕ

Ключевые слова: Тог, Св. Ованес, Аветараноц, Шош, Бедашен, Монастырь Егиша Богородичный, Монастырь Бриехци.

Изучаемая церковь Ованнеса (Св. Иоанна) находится в центре Тох Гадрутского района Республики Арцах, 50 метров юго-западнее от дворца Мелик Егана, на наклонной местности. Церковь находится в достаточно хорошо сохраненном виде. Она повторяет в позднем средневековье широко распространенный в Сюнике и некоторых частях Армении тип трехнефной базилики. Точная дата постройки церкви неизвестна. Согласно надписи на постаменте креста, крышу восстановил Мелик Еган в 1736 году по приказу католикоса Кавказской Албании Петроса.

Рядом с церковью с южной части находится обнесенный стеной двор размером 17,0×22,0 метров. В исторических источниках сохранились сведения о том, что рядом с церковью во дворе находилась часовня, которая служила усыпальницей для Мелик-Еганянов Дизака.

Для уточнения этих сведений, а также для изучения окрестности церкви в 2017 году были проведены раскопки в северном и южном дворах.

Данным докладом представлены основные результаты археологических исследований церкви 2017 года.

В результате раскопок и чистки местонсти засвидетельствованы остатки двух строений, также более 80 надгробий в северном и южном дворах, часть которых носят сюжетные рельефы и надписи. Последние впервые вводятся в научный оборот.

Նժդեհ Երանյան, Համլետ Պետրոսյան

Տողի Սբ. Հովհաննես եկեղեցու հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները

Նկ.1. Սբ. Հովհաննես եկեղեցու ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից

Նկ.2. Սբ. Հովհաննես եկեղեցին և հարավ-արևմուտքից կից շինության հետքերը պեղումներից առաջ

Նկ. 3. Եկեղեցուն հարավ-արևմուտքից կից շինության ընդհանուր տեսքը պեղումներից հետո



Նկ. 4-5. Արծաթե մետաղադրամներից բաղկացած գանձը

Նկ. 6-7. Եկեղեցուն հարավ-արևելքից կից շինության ընդհանուր տեսքը

Նկ. 8. Թվակիր արձանագրությամբ տապանաքար՝ հարավ-արևելյան շինության պատի մեջ

Նկ. 9. Եկեղեցուն հարավ-արևելքից կից շինության աբսիդի տակ իրականացված թաղումը

Նկ. 10. Պեղումներից հայտնաբերված օծանելիքի սրվակ

Նկ.11. Հարավային գլխանաբակի ընդհանուր տեսքը պեղումներից հետո

Նկ.12. Հարավային գլխանաբակի օդալուսանկարը, լուս. Ա. Մկրտչյան

Նկ. 13. Հյուսիսային գլապանաբակի ընդհանուր տեսքը մաքրումից հետո

Նկ. 14-15. Տապանաքարեր հյուսիսային գլապանաբակում

Նկ.16. Տապանաքարեր հյուսիսային գրապանաբակում

Նկ.17-22. Նորահայտ արձանագիր գրապանաքարեր Սբ. Հովհաննես եկեղեցու հարավային և հյուսիսային գրապանաբակերից